ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆՖՐԱՑԱԾՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ILF) ՆԵՅՐՈԿԵՆՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՈՒԺՈՒՄ

Ի՞նչ է ինֆրացածր հաճախականության (ILF) նեյրոկենսակառավարումը:
Նեյրոկենսակառավարումը գոյություն ունի ավելի քան 30 տարի: Նեյրոկենսակառավարումը ոչ ինվազիվ բուժում է, որն օգտագործում է ուղեղի ինքնակարգավորման սեփական ունակությունը: ILF նեյրոկենսակառավարումը կենտրոնանում է ուղեղի կանոնավոր էլեկտրական ակտիվության (ուղեղի ալիքների) մարզման վրա: Նեյրոկենսակառավարումը գործընթաց է, որը ներառում է ձեր գլխին սենսորների տեղադրում՝ ձեր ուղեղի ալիքները վերահսկելու համար: Ահա թե ինչպես է այն աշխատում.

1. Հայտնաբերում. Սենսորները գրանցում են ձեր ուղեղի ալիքային ակտիվությունը:
2. Հետադարձ կապ. Այս տեղեկատվությունն ուղարկվում է համակարգչային ծրագրի, որը տրամադրում է իրական ժամանակի հետադարձ կապ: Դուք գուցե կտեսնեք տեսողական ազդանշաններ (օրինակ՝ տեսախաղ) կամ զգալ շոշափելի հետադարձ կապ՝ ձեր ծնկներին դրված դողացող փափուկ խաղալիքի տեսքով կամ լսել ձայներ, որոնք փոխվում են՝ կախված ձեր ուղեղի ակտիվությունից:
3. Ուղեցույց. Հետադարձ կապն օգնում է ձեր ուղեղի ալիքներն ուղղորդել դեպի ցանկալի վիճակ՝ հնարավորություն ընձեռելով բարելավելու տրամադրությունը, կենտրոնացումը և ընդհանուր բարեկեցությունը:

Կարճ ասած՝ նեյրոկենսակառավարումը սովորեցնում է ձեր ուղեղին գործել իր ամենաառողջ վիճակում՝ ներգրավելով հետադարձ կապը՝ դրական փոփոխություններ խթանելու համար:

Նեյրոկենսակառավարման սեանսի նկարագրությունը.

- Հոգեկան առողջության անձնակազմի անդամը կհարցնի այն վարքագծերի և ախտանիշների մասին, որոնք բարելավելու վերաբերյալ հաճախորդին կարող է օգնություն անհրաժեշտ լինել: Հաղորդված վարքագծերն ու ախտանիշները կորոշեն համակարգչային ծրագրում մուտքագրվող տեղեկատվությունը և սենսորների տեղադրումը գլխի/գլխամաշկի վրա:
- Սեանսի ընթացքում հաճախորդները կլինեն արթուն և հարմարավետ նստած: Անզգայացման կամ հանգստացնող միջոցներ չեն կիրառվի:
- Հոգեկան առողջության անձնակազմի անդամը սենսորներ կտեղադրի հաճախորդի գլխի որոշակի տեղում: Այդ տեղը կմաքրվի սպիրտով, ոս prep-ով (մեղմ հղկող միջոց) և կավելացվի մածուկ, որպեսզի սենսորները մնան գլխի վրա:
- Սեանսի ընթացքում սենսորները գրանցում են ուղեղի ալիքները, որոնք ուղեղի էլեկտրական ակտիվությունն են: Համակարգչային ծրագիրն օգտագործում է ուղեղային ալիքներ՝ հետադարձ կապ ստեղծելու համար, որը հաճախորդը կտեսնի համակարգչի մոնիտորի վրա:
- Հաճախորդը ձեռքին կունենա որևէ մի առարկա՝ շոշափելի հետադարձ կապի համար (թրթռացող փափուկ խաղալիք), կդիտի տեսանյութ կամ համակարգչային խաղ կխաղա տեսողական հետադարձ կապի համար, մինչ սենսորները կտեղադրվեն գլխին: Հաճախորդներն ու խնամողները հոգեկան առողջության անձնակազմի անդամին կտեղեկացնեն առաջընթացի մասին՝ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ հաղորդելով

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆՖՐԱՑԱԾՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ILF) ՆԵՅՐՈԿԵՆՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՈՒԺՈՒՄ

ախտանիշների և վարքագծերի մասին:

- Հանդիպման ընթացքում հոգեկան առողջության անձնակազմի անդամն ուշադիր կհետևի հաճախորդներին, հարցեր կտա և փոփոխություններ կկատարի համակարգչային ծրագրում՝ հիմնվելով հաղորդված տեղեկատվության վրա:
- Սենսորները կարող են փոխվել գլխի տարբեր մասերում սեանսի ընթացքում՝ բոլոր հայտնաբերված ախտանիշներին ու վարքագծերին անդրադառնալու համար: Սեանսն ավարտվելուց հետո սենսորները հանվում են գլխից ջրով կամ սպիրտով:

Սեանսների քանակը և հաճախականությունը.

- Սեանսները կարող են տևել 30-60 րոպե: Եթե հաճախորդները մտահոգություններ ունենան,կարող են ցանկացած պահի դադարեցնել սեանսը:
- Խորհուրդ է տրվում շարունակել բուժումը 3-6 ամիս՝ շաբաթական 1-2 օր հաճախականությամբ:
- Սեանսները կարող են շարունակվել 6 ամսից ավելի՝ կախված հաճախորդի արձագանքից: Հաճախորդների մեծ մասը շարունակում է բուժումը սկզբնական բուժման կուրսից մեկ տարի անց՝ առաջընթացը շարունակելու համար: Վիճակի պահպանման սեանսները կարող են շարունակվել մեկ տարուց հետո:

Բուժման/Ընթացակարգի հնարավոր օգուտները.

Նեյրոկենսակառավարումը կարող է օգնել կամ նվազեցնել անհանգստության, դեպրեսիայի, ուշադրության պակասի և հիպերակտիվության խանգարման (ADHD), աուտիզմի սպեկտրի խանգարման (ASD) և հետտրավմատիկ սթրեսային խանգարման (PTSD) ախտանիշները: Սա կարող է ներառել.

- Ավելի լավ հուզական կայունություն և հաղթահարման մեխանիզմներ
- Բարելավված կենտրոնացում և ուշադրության տևողություն
- Բարելավված հիշողություն և սովորելու ունակություններ
- Ավելի սուր ճանաչողական մշակման և խնդիրների լուծման հմտություններ
- Քնի որակի բարելավում և քնի խանգարումների նվազում
- Ցավի ընկալման նվազում և կառավարում
- Բարելավված ինքնակառավարում և վարքային վերահսկողություն

Հայտնի հնարավոր կարճաժամկետ կողմնակի ազդեցությունները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Գլխացավեր
- Գրգռվածություն
- Թմրություն
- Ցածր էներգիա
- Գլխամաշկին բուժման տեղում անհարմարության զգացում՝
- Խանգարված քուն կամ քնելու դժվարություն
- Սրտխառնոց

Երկարաժամկետ բացասական կողմնակի ազդեցությունների կամ բուժման վնասակարության վերաբերյալ որևէ ապացույց չկա: Որոշ հաճախորդներ հայտնել են ախտանիշների ժամանակավոր վատթարացման մասին, որոնք լուրջ չեն եղել և կարողացել են շտկվել սեանսի ընթացքում: Կարևոր է, որ ձեր բժիշկը տեղեկացված լինի ցանկացած փոփոխության կամ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆՖՐԱՑԱԾՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ILF) ՆԵՅՐՈԿԵՆՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՈՒԺՈՒՄ

բացասական ազդեցության մասին, նույնիսկ եթե դրանք, կարծես, կապված չեն բուժման հետ, որպեսզի այն հնարավոր լինի փոփոխել:

Դեղամիջոցներ.
Կարևոր է տեղեկացնել ձեր բժշկին ձեր ընդունած բոլոր դեղամիջոցների և հավելումների, ինչպես նաև ձեր սովորական ռեժիմի ցանկացած փոփոխության մասին: Քանի որ նեյրոկենսակառավարումը բարելավում է ուղեղի գործառույթը, դեղամիջոցների դեղաչափը գուցե անհրաժեշտ կլինի ճշգրտել: Երբեք մի՛ դադարեցրեք կամ մի՛ փոխեք որևէ դեղամիջոցի դեղաչափը՝ առանց ձեր բժշկի հսկողության:

☐ Ես կարդացել եմ այս ձևաթուղթը:
☐ Այս ձևաթուղթը կարդացել են ինձ համար:
☐ Այս ձևաթուղթը թարգմանվել է _____ ինձ համար:
Եթե այս ձևաթղթի թարգմանված տարբերակը ստորագրվել է հաճախորդի և/կամ պատասխանատու չափահասի կողմից, թարգմանված տարբերակը պետք է կցվի անգլերեն տարբերակին:

Ինձ բացատրվել է նեյրոկենսակառավարման մասին տեղեկատվությունը՝ ներառյալ հնարավոր օգուտները, ռիսկերը և կողմնակի ազդեցությունները, ինչպես նաև այլընտրանքային բուժումները: Ես համաձայն եմ մասնակցել այս բուժմանը: Ես հասկանում եմ, որ համաձայությունը ցանկացած պահի կարելի է չեղարկել:

_____ _____
Հաճախորդի ստորագրությունը Ամսաթիվ

_____ _____ _____
Պատասխանատու չափահասի ստորագրությունը* Հարաբերությունը հաճախորդի հետ Ամսաթիվ

* Պատասխանատու չափահաս = Անհրաժեշտության դեպքում՝ անչափահասի խնամակալը, հոգաբարձուն կամ ծնողը:

Ես բացատրել եմ Նեյրոկենսակառավարման առավելություններն ու կողմնակի ազդեցությունները, ինչպես նշված է 1-ին և 2-րդ էջերում, և ստացել եմ հաճախորդի/պատասխանատու չափահասի տեղեկացված համաձայնությունը:

_____ _____
Բուժաշխատողի ստորագրությունը և աստիճանը Ամսաթիվ